Արձանագրություն N 2

«ԱՐՁՆԻՀ-ԳՀԱՊՁԲ-2021/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Արզնի 04 օգոստոսի, 2021թ.

Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Զ. Նադոյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Հարությունյանը և Կ. Իսակովա
Հանձնաժողովի քարտուղար ՝ Մ. Մովսիսյան

I. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին

---

(Զ. Նադոյան)

1.1. **Ընդունել ի գիտություն, որ.**

Հայտերի բացումը տեղի է ունեցել 2021թ. -ի օգոստոսի 3-ին ժամը 10:00-ին: Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| հ/հ | Կազմակերպության անվանումը | Հասցեն |
|---|---|---|
| 1 | «Ակսել Գալստյան» ԱՁ | ՀՀ ք.Երևան, Ավան-Առինջ 2մկր. , 2/8շ. , 34բն<br>Էլ. փոստ՝ g.aksel@mail.ru |
| 2 | Առուստամյան Արայիկ ֆիզ. անձ | ԱՀ, Վաղարշյան 38, բնակարան 8<br>Էլ. փոստ՝ araik.arystamyan.2014@mail.ru |

1.2. **Հայտ պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունն հրավերով սահմանված կարգին.**

Մասնակիցների կողմից ներկայացրած ծրարները համապատասխանում են հրավերով նախատեսված պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.3. **Բացված ծրարներում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին**

Առուստամյան Արայիկ ֆիզ. անձի կողմից ներկայացված ծրարում բոլոր փաստաթղթերը առկա են: «Ակսել Գալստյան» ԱՁ-ի կողմից ներկայացված ծրարում

բացակայում է հրավերով պահանջվող՝ առաջարկվող ավտոմեքենայի անխախ գնահատման փորձաքննության արդյունքները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.4. **Հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.**

1.4.1 «ԱՐՋՆԻՀ-ԳՀԱՊՁԲ-2021/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նախահաշվային գինն է.

| Չափաբաժին | Անվանումը | Նախահաշվային արժեք /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| *1* | Ավտոմեքենա | 4 500 000 |

1.4.2 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները /պայմանագրի կատարման համար ընդհանուր գումարով/.

| *Չափաբաժին No.* | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | «Ակսել Գալստյան» ԱՁ | 4 750 000 | 0 | 4 750 000 |
| | Առուստամյան Արայիկ ֆիզ. անձ | 4 400 000 | 0 | 4 400 000 |

1.4.3 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան անճշտություններ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

1.5. **Հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին.**

Հրավերի վերաբերյալ պարզաբանման հարցումներ չեն ստացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

## II. Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնելու մասին

-------------------------------------------------------------------------

(Զ. Նադոյան)

2.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3–րդ կետերը, ՀՀ Կառավարության 2017թ. -ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին /«Ակսել Գալստյան» ԱՁ/՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:*

III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

---

(Ա. Լալայան)

3. «ԱՐԶՆԻՀ-ԳՀԱՊՁԲ-2021/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 2021թ.-ի օգոստոսի 5-ին ժամը 17:00-ին, ՀՀ Կոտայքի մարզ, գ.Արզնի, 5-րդ փողոց 1-ին նրբանցք N6 համայնքապետարանի վարչական շենք N-1 հասցեում:

Ընդունվել է որոշում` կողմ` 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Զաիլ Նադոյան

Հանձնաժողովի
անդամներ՝

Նելլի Հարությունյան

Կլարա Իսակովա

Հանձնաժողովի քարտուղար `     Մարի Մովսիսյան